ԲՈՒՀԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը	
Նստարանի համարը	

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Նշվածներից ո՞րն է բնահասարակական աշխարհահամակարգ։**

1) սառցադաշտը
2) քաղաքը
3) ջրամբարը
4) անապատը

2 **Հյուսիսային կիսագնդի ձյունապատ լեռների ո՞ր լանջերի ձյունն է ամենաարագը հալչում։**

1) հյուսիսարևելյան
2) հարավային
3) հյուսիսարևմտյան
4) հյուսիսային

3 **Քանի՞ աստիճան է հորիզոնի հարավարևմտյան կողմի ազիմուտը։**

1) 225˚
2) 210˚
3) 185˚
4) 270˚

4 **Քարտեզում 2 կետերի հեռավորությունը 10 սմ է, իսկ իրականում՝ 9 կմ։ Որքա՞ն է այդ քարտեզի մասշտաբը։**

1) 1 : 900 000
2) 1 : 9000 000
3) 1 : 90 000 000
4) 1 : 90 000

5 **Նշվածներից ո՞րն է տեղեկույթի էմպիրիկ և տեսական ընդհանրացման մեթոդ։**

1) շրջանացումը
2) վիճակագրականը
3) դաշտայինը
4) նկարագրականը

6 **Նշվածներից ո՞րը երկրագնդի օրական պտույտի հետևանք *չէ։***

1) գիշերվա ու ցերեկվա հերթափոխը
2) ժամային գոտիների առաջացումը
3) Կորիոլիսի ուժի առաջացումը
4) տարվա եղանակների առաջացումը

7 Ի՞նչ է պատկերված նկար 1-ում:

1) գեյզեր
2) ջրվեժ
3) հրաբուխ
4) ջրհոր

Նկար1

8 Նշվածներից ո՞րն է հրային ապար:

1) կրաքարը
2) բազալտը
3) կավիճը
4) մարմարը

9 Մթնոլորտի ձևավորման պահին ո՞ր գազի քանակն է գերազանցել 90%-ը:

1) թթվածին
2) ծծմբական գազ
3) ջրածին
4) ածխաթթու գազ

10 Նկար 2-ում ո՞ր թվով է նշված օդի ջերմաստիճանի տարեկան ընթացքի կորը հասարակածային լայնություններում:

1) 2
2) 3
3) 4
4) 1



Նկար 2

11 Ո՞ր ջերմաստիճանի ջրերն են ամենախիտը:

1) +2˚C
2) +3˚C
3) +4˚C
4) +1˚C

12 Գետի լայնակի կտրվածքի մակերեսը 6 մ² է, արագությունը՝ 6 մ/վ: Որքա՞ն կլինի գետի ծախսը:

1) 70 մ³/վ
2) 24 մ³/վ
3) 36 մ³/վ
4) 12 մ³/վ

13 Ո՞ր դարաշրջանում է մասնատվել Պանգեյա մայրցամաքը:

1) Արխեյան
2) Կայնոզոյան
3) Պալեոզոյան
4) Մեզոզոյան

14 Մթնոլորտային տեղումներից ո՞րն է հանկարծակի թափվում սառցաբյուրեղների տեսքով Երկրի մակերևույթ և երբեմն առաջացնում ավերածություններ:

1) ձյուն
2) կարկուտ
3) ցող
4) անձրև

15 Նկար 3 - ում ո՞ր տառով է պատկերված մշտադալար կոշտատերև անտառների զոնան:

1) Բ
2) Գ
3) Դ
4) Ա



նկար 3

16 **Ի՞նչն է բնորոշ տայգայի բնական զոնային:**

1) պոդզոլային հողերի գերակշռությունը
2) ծառային բուսականության բացակայությունը
3) կապիկների և կոկորդիլոսների տարածումը
4) հողի բազմամյա սառածության գերակշռությունը

17 **Քարտեզ 1-ում Է տառով ո՞ր թերակղզին է նշված.**

1) Քեյփ Յորքի
2) Սոմալիի
3) Մալակկայի
4) Առնհեմլենդի

18 **Քարտեզ 1-ում Գ տառով ո՞ր նեղուցն է նշված.**

1) Թորեսի
2) Կուկի
3) Դրեյկի
4) Բասսի



Քարտեզ 1

19 **Ո՞ր ծովն է գտնվում Եվրասիայի հարավում։**

1) Ճապոնական
2) Նորվեգական
3) Լապտևների
4) Արաբական

20 **Ո՞ր մայրցամաքում է աճում վելվիչի բույսը։**

1) Հյուսիսային Ամերիկա
2) Անտարկտիդա
3) Հարավային Ամերիկա
4) Աֆրիկա

21 **Նշված ծովային հոսանքներից ո՞րն է սառը։**

1) Գոլֆստրիմը
2) Ալյասկայինը
3) Կալիֆոռնիականը
4) Անտիլյանը

22 **Նշվածներից ո՞րն է աճում Հարավային Ամերիկայում։**

1) հսկա սեքվոյա
2) ժենշեն
3) բրազիլական հևեյա
4) Էվկալիպտ

23 **Ո՞ր բնական զոնան է տարածվում Հյուսիսային Ամերիկայում.**

1) կամպոս
2) պրերիա
3) սելվաս
4) պամպա

24 **Ո՞ր լիճն է գտնվում Հարավային Ամերիկայում։**

1) Նյասա
2) Բայկալ
3) Պոոպո
4) Վերին

25 **Ովքե՞ր են առաջինը հայտնաբերել Անտարկտիդան։**

1) անգլիացիները
2) ամերիկացիները
3) ռուսները
4) շվեդները

26 **Ո՞ր կղզին է տարածքով ամենամեծը։**

1) Սումատրա
2) Սուլավեսի
3) Գրենլանդիա
4) Կալիմանտան

27 **Ո՞ր հանրապետությունն է նախագահական։**

1) Հնդկաստան
2) Գերմանիա
3) Ռուսաստան
4) Իտալիա

28 **Ո՞ր երկիրն ունի ավելի քան 200 մլն բնակիչ։**

1) Ճապոնիան
2) Ղազախստանը
3) Ռուսաստանը
4) Ինդոնեզիան

29 **Ո՞ր երկիրը ելք ունի դեպի Կարմիր ծով։**

1) Սիրիան
2) Լիբանանը
3) Եգիպտոսը
4) Իրանը

30 **Զարգացած հետարդյունաբերական երկրներ են.**

1) Հնդկաստանը և Չինաստանը
2) Արգենտինան և Մեքսիկան
3) Քուվեյթը և Վենեսուելան
4) Նորվեգիան և Գերմանիան

31 Երկրի տարածքը կազմում է 30 000 կմ², բնակչության թիվը՝ 9 մլն մարդ: Որքա՞ն կլինի բնակչության միջին խտությունը:

1) 130 մարդ/ կմ²
2) 300 մարդ/ կմ²
3) 420 մարդ/ կմ²
4) 350 մարդ/ կմ²

32 Նշվածներից ո՞րն է միգրացիայի ձև:

1) հարկադիր
2) քաղաքականը
3) ազգայինը
4) տնտեսականը

33 Նշվածներից ո՞ր երկիրն է առաջինն աշխարհում անգրագետների բացարձակ թվով:

1) Հնդկաստանը
2) Պակիստանը
3) Չինաստանը
4) Ռուսաստանը

34 Ո՞ր երկրներն են գտնվում զարգացման արդյունաբերական փուլում:

1) Ֆրանսիան և Իտալիան
2) Մոզամբիկը և Բանգլադեշը
3) Բրազիլիան և Արգենտինան
4) Զամբիան և Եթովպիան

35 Ո՞ր երկրներն են աշխարհում առաջատար ածխի պաշարներով:

1) Նիդեռլանդները և Լյուքսեմբուրգը
2) Չինաստանը և Ռուսաստանը
3) Նոր Զելանդիան և Տաջիկստանը
4) Ֆինլանդիան ու Ֆրանսիան

36 Ո՞ր երկիրն է աշխարհում առաջատար բրնձի մշակությամբ:

1) Բրազիլիան
2) Կանադան
3) Չինաստանը
4) Ռուսաստանը

37 **Տրված պետություններից ո՞րն ունի ցամաքային սահման Իրանի հետ։**

1) Հայաստան
2) Բահրեյն
3) ԱՄԷ
4) Սաուդյան Արաբիա

38 **Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը։**

1. Ավստրիա	ա. Ամստերդամ
2. Դանիա	բ. Կոպենհագեն
3. Նիդեռլանդներ	գ. Փարիզ
4. Ֆրանսիա	դ. Վիեննա

1) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
2) 1-ա, 2-դ, 3-գ, 4-բ
3) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
4) 1-դ, 2-բ, 3-ա, 4-գ

39 **Ո՞ր երկիրն ունի ելք դեպի Մեքսիկական ծոց։**

1) ԱՄԷ
2) Նորվեգիան
3) ԱՄՆ
4) Իրաքը

40 **Ո՞ր պետությունն է գտնվում Արևելյան Ասիայում։**

1) Ղազախստան
2) Լիբանան
3) Ճապոնիա
4) Պակիստան

41 **Զույգերով տրված պետություններից որո՞նք են անկլավ։**

1) Սվազիլենդը և Լեսոտոն
2) Ալժիր և Նիգերիա
3) Մարոկկո և Եթովպիա
4) Եգիպտոսը և Թունիսը

42 **Ինդոնեզիային պատկանող կղզի է.**

1) Հոնսյուն
2) Թասմանիան
3) Սիցիլիան
4) Կալիմանտանը

43 Ո՞ր տարածաշրջանին են առավելապես բնորոշ բիդոնվիլները։

1) Արևմտյան Եվրոպային
2) Ավստրալիան և Օվկիանիային
3) Հյուսիսային Ամերիկային
4) Լատինական Ամերիկային



Քարտեզ 2

44 Քարտեզ 2–ում ո՞ր տառով է նշված Քաջարան քաղաքը։

1) Է
2) Ե
3) Ը
4) Զ

45 Քարտեզ 2–ում ո՞ր տառով է նշված Ծաղկունյաց լեռնաշղթան։

1) Ա
2) Բ
3) Գ
4) Դ

46 **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Հյուսիսում է գտնվում Իրանական բարձրավանդակը:
2) Հարավից եզրավորում է Հայկական Տավրոսի լեռնաշղթան
3) Արևմուտքից եզրավորում են Փոքր Կովկասի ծալքաբեկորավոր լեռները:
4) Արևելքում է գտնվում Անատոլական սարահարթը:

47 **ՀՀ կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Հստակ արտահայտված է արևմուտքից արևելք փոփոխվող լայնակի կլիմայական գոտիականությունը:
2) Կլիմայաստեղծ գործոններից են պասսատները:
3) Միջլեռնային գոգավորությունների ցածրադիր մասերում ձմռանը դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն:
4) Ամենաշատ տեղումները թափվում են Եղեգիսի հովտում:

48 **Հայաստանում տնտեսության ո՞ր ճյուղերին է բաժին ընկնում արտահանվող արտադրանքի գերակշիռ մասը:**

1) սև մետաղաձուլությանը և կաշվի-կոշիկի արտադրությանը
2) գորգագործությանը և կաուչուկի արտադրությանը
3) գունավոր մետալուրգիային և գինու-կոնյակի արտադրությանը
4) շվեյցարական պանրագործությանը և մեղրի արտադրությանը

49 **Մեծամորի ատոմի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ:***

1) Աշխատում է ներկրվող միջուկային վառելիքով:
2) ՀՀ ամենահզոր էլէկտրակայանն է:
3) Արմավիրի մարզում է:
4) Միակ ատոմակայանն է հարավկովկասյան տարածաշրջանում:

50 **Զույգերով տրվածներից որո՞նք են նեֆելինային սիենիտի հանքավայրեր:**

1) Քաջարանը և Ագարակը
2) Շվանիձորը և Թեժ լեռը
3) Մեղրաձորը և Սոթքը
4) Կապանը և Ալավերդին

51 **Ջերմոցային էֆեկտի ուժեղացման պատճառներից է.**

1) խոշոր քաղաքներում զբոսաշրջության զարգացումը
2) հանքային պարարտանյութերի օգտագործման չարաշահումը
3) շինարարության պաճառով փոշու արտանետումները
4) մթնոլորտում ածխաթթու գազի և մեթանի ավելացումը

52 **«Բնական ռեսուրս — վերականգնման հնարավորություն» զույգերից ընտրել ճիշտը։**

1) քամու էներգիա — սպառվող
2) արեգակնային էներգիա — անսպառ
3) հանքային ռեսուրս — անսպառ
4) կենսաբանական ռեսուրս —- անսպառ

53 **Տրվածներից ո՞րն է հողաբարելավման միջոցառում:**

1) ջրամբարների կառուցումը
2) հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը
3) աերացիան
4) քարամաքրումը

54 **Տրվածներից ո՞րն է ՄԱԿ-ի մասնագիտացված կազմակերություն՝ մշակութային հուշարձանների պահպանմամբ։**

1) ՅՈՒՆԻՍԵՖ
2) ՅՈՒՆԵՊ
3) ՅՈՒՆԻԿՏԱԴ
4) ՅՈՒՆԵՍԿՕ

55 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Թույլ զարգացած երկրներում զանգվածային անգրագիտությունը հետամնացության ցուցանիշներից է։
2) Թույլ զարգացած երկրների տնտեսության մեջ գերակշռողը գյուղատնտեսության բաժինն է։
3) Թույլ զարգացած երկրներում բնապահպանական հիմնախնդիրներ չկան։
4) Թույլ զարգացած երկրների բնառեսուրսային ներուժը վիթխարի է, օգտագործման տեսանկյունից արդյունավետությունը՝ ցածր։

56 **Տրված են աշխարհի նշանավոր գետեր: Գրել Աֆրիկայում հոսող գետերի անունները.**

1) Վոլգա
2) Միսուրի
3) Օրանժ
4) Ամազոն
5) Նիգեր
6) Մուրեյ
7) Նեղոս
8) Կոնգո

57 **Գրել այն լճերի համարները, որոնք գտնվում են Եվրասիայում.**

1) Բայկալ
2) Օնտարիո
3) Տիտիկակա
4) Բալխաշ
5) Չադ
6) Վիկտորիա
7) Նյասա
8) Արալյան

58 **Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական պայթյունը».**

1) ԱՄՆ
2) Ուկրաինա
3) Զամբիա
4) Կանադա
5) Սոմալի
6) Անգոլա
7) Եմեն
8) Իտալիա

59 **Գրել այն երկրների համարները, որտեղ գերակշռում է մահմեդականությունը.**

1) Հարավային Կորեա
2) Չինաստան
3) Իրան
4) Հնդկաստան
5) Ալբանիա
6) Ֆրանսիա
7) Տաջիկստան
8) Պակիստան

60 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են թեյի մշակությամբ.**

1) Գերմանիա
2) Ճապոնիա
3) Իտալիա
4) Ավստրալիա
5) Չինաստան
6) Հնդկաստան
7) Հունաստան
8) Թուրքմենստան

61 **Գրել այն բնակավայրերի համարները, որոնք գտնվում են Սյունիքի մարզում.**

1) Սիսիան
2) Վարդենիս
3) Վաղարշապատ
4) Մարալիկ
5) Քաջարան
6) Գորիս
7) Մարտունի
8) Ապարան

62 Տրված պետությունների համարները դասավորել դրանց տարածքի մեծության նվազման կարգով:

1) Ռուսաստան
2) Կանադա
3) ԱՄՆ
4) Ինդոնեզիա

63 ՀՀ տրված քաղաքների համարները դասավորել հյուսիսից հարավ ուղղությամբ.

1) Բերդ
2) Աշտարակ
3) Սևան

(64-65). Քաղաքի բնակչության թիվը 90 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 1100 մարդ: Եկածների թիվը 2500 մարդ է, մեկնածների թիվը՝ 1900 մարդ:

64 Որոշել միգրացիայի մնացորդը:

65 Որոշել քաղաքի բնակչության թիվը 1 տարի հետո:

66 Երկրում հնդկացորենի ցանքատարածությունների մակերեսը 5 մլն հա է, համախառն բերքը՝ 35 մլն տ: Որքա՞ն է հնդկացորենի միջին բերքատվությունը (ցենտներով):

67 90 000 կՎտ/ժ էլեկտրաէներգիա արտադրելու համար քանի՞ տոննա քարածուխ է հարկավոր (քարածխի ջերմային գործակիցը 1 է):

68 Օդի ջերմաստիճանը լեռան ստորոտում 0° է, իսկ գագաթին՝ -15°: Հաշվել լեռան հարաբերական բարձրությունը: Հաշվարկը կատարել 5°-ով:

69 **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ *սխալ*.**

1) Երզնկայի դաշտը Արևմտյան Եփրատի ստորին հոսանքի ավազանում է։
2) Ալաշկերտի դաշտը Արևելյան Եփրատի հովտում է։
3) Քեբանի ջրամբարը կառուցված է Խարբերդի դաշտում։
4) Բասենի դաշտը տարածվում է Ճորոխի վերին հոսանքի ավազանում։
5) Խարբերդի դաշտում միախառնվում են Արևմտյան Տիգրիս և Արևելյան Տիգրիս գետերը։
6) Արևելյան Եփրատի հովտում ամենաբարձրադիրը Մանազկերտի դաշտն է։

70 **ՀՀ Շիրակի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Ունի արտեզյան ավազան։
2) Արևելյան սահմանն անցնում է Գեղամա հրաբխային լեռնավահանի ջրբաժան գծով։
3) Տիրապետողը լեռնատափաստանային լանդշաֆտներն են։
4) ՀՀ միակ մարզն է, որը չունի արտաքին սահմաններ։
5) Այս մարզում են Հատիս և Արայի լեռների հրաբխային կոները։
6) Շատ հարուստ է տուֆի հանքերով։